հարցի նման միակողմանի լուծում. հայ պատուիրակները երկար սպասեցին Ղարաքիլիսայում, վրացիները պատուիրակներ չուղարկեցին: Կապ. Գրինը գնաց գոր. Թոմսընին զեկուցանելու համար, և այլևս ձայնը չլսուեց:

Երկու ժողովուրդների զինուած ընդհարման առաջն առնելու փորձեր արաւ և Վիրահայոց Ազգ. Խորհուրդը: Դեկտ. 11-ին նրա պատուիրակութիւնը — Ա. Երզնկեանը, Ա. Քոչարեանը, Տէր-Օհանեանը և Աբովեանը — վրաց կառավարութեան արտօնութեամբ, մեկնեց Թիֆլիսից՝ կամենալով Վորոնցովկայի ու Ջալալ-Օղլիի վրայով հասնել Ղարաքիլիսա և համոզել հայերին, որ դադարեցնեն կռիւը և վէճը լուծեն բանակցութիւնների միջոցով: Դեկտ. 15-ին պատուիրակութիւնը հասաւ Եկատերինֆելդ, ուր պահուեց մի քանի օր, ապա վերադարձուեց Թիֆլիս, իբր թէ, կառավարութեան հրամանով: Պատուիրակութեան անդամներ Երզնկեանն ու Աբովեանը ենթարկուեցին հայհոյանքի և անարգանքի, իսկ Քոչարեանը ծեծուեց ժողովրդական գւարդիականների ձեռքով: Երեքին էլ փակեցին սենեակի մէջ և դաշոյնը կրծքներին ուղղած՝ սպառնում էին սպանել: Զօդնեց և այն փաստը, որ Ա. Երզնկեանը Վրաստանի Խորհրդարանի անդամ էր. նրան համարում էին հայկական լրտես:

Պատերազմի առաջն առնելու մի փորձ արաւ և Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին, որը դեռ ընդհարումներից առաջ մեկնել էր Երևանից և գտնուում էր Ղարաքիլիսայի շրջանում: Զոր. Ցուլուկիձէի հետ ուղիղ հեռագրաթելով խօսելուց յետոյ, նա յորդորեց Հայաստանի կառավարութեան կանգնեցնել առաջ շարժուող զօրքերը, պարպել Լոռիի գրաւած վայրերը և հայ-վրացական խառն պատուիրակութեան միջոցով՝ համոզել Լոռիի հայ գիւղացիութեան, որ համակերպուի և ճանաչէ վրաց իշխանութիւնը, իսկ սահմանների հարցը լուծել բանակցութիւնների միջոցով: Մի ձև, որ, ի հարկէ, անհնար էր ընդունել ստեղծուած պայմաններում:

Եւ դէպքերն ընթացան իրենց ճանապարհով. խօսքը մնացել էր զէնքին: